

եկեղեցիներու հոգևոր պետերը Հռոմ կը հաւաքուին:

Գրիգոր ԺԳ. ի անմիջական յաջորդները սակայն չեն դադրիր շահագրգռուելէ արևելեան ժողովուրդներով, ի մէջ այլոց Հայերով, որոնց մէջ կրօնական նպատակաւոր հրատարակութիւններ տարածելու ձեռնարկներ կ'ընեն Հռոմի մէջ Գրիգոր ԺԳ. ի ձուլել տուած գիրերէն օգտուելով:

Այս ջանքերը և աշխատանքները հուսկ ուրեմն կ'ստանան կանոնաւոր արշաւանքի մը ձևը դէպի արևելեան քրիստոնեաները:

Գրիգոր ԺԵ. (1621–1623) 1622 ին կը հիմնէ կրօնական մեծ կազմակերպութիւն մը «Բրոքալանդա ֆլորէ» ն կամ «Հաւատոյ տարածման ժողով»ը, իսկ իր յաջորդը Ուրբանոս Ը. (1623–1644) այս հաստատութեան կը կցէ 1627 ին դպրոց մը, քարոզիչներ պատրաստելու համար, և բազմալեզուեան տպարան մը այս քարոզութիւնները գիրի և գիրքի միջոցաւ ալ տարածելու համար:

Բրորականտայի նպատակն էր տարածել կաթոլիկութիւնը հեթանոսներու մէջ, նոյնպէս նաև ջնջել «հերետիկոսութիւն»ը և «հերձուած»ները քրիստոնեաներու մէջ: Այս կարևոր հիմնարկութիւնը բարձրագոյն ատեան մըն էր որուն կը հպատակէին աշ-